յաւելան շնորհքն. յաղագս որոյ մեք լուսաւորեալք, և նմա միշտ Լուսաւորիչ անուանեցաք՝ և անուանեմք։ Յայտնապէս՝ որպէս արեգակն 'ի մէջ երկնից լոյս անշիջանելի հանապազ վառեալ 'ի նշխարս ոսկերաց իւրոց, և կայ միշտ յաթոռ փառաց իւրոց. ուստի բաշխի և բաժանի յաճախաբար պարգևօք՝ յուղղադաւան ժողովուրդս և 'ի վիճակն սահմանաց իւրոց՝ էացեալ և արմատացեալ մինչև յաւիտեան։ Գրիգորիոս աբբեն կոչեցեալ թարգմանութեամբ, յարակիր և ներգործական անուամբ. որ ոչ երբէք ետուր քուն աչաց, և ոչ ծանտրութիւն արտեւանաց, և ոչ հանդիստ դժուարաբեռն մարմնոյդ, մինչև գտեր զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ և տանս Թորգոմայ։ Գրիգորիոս՝ որդի մխիթարութեան ըստ այլում կոչման, ոչ մօրն քո Ոգոհեայ, այլ բոլոր Հայաստանեայցս եկեղեցւոյ. ոչ որդի վշտաց՝ որպէս Բենիամին մօրն իւրոյ Հռաքելի, և առիթ մահու. և կամ վայ Քաբովթնացն 'ի յառման տապանակին։ Այլ առիթ բերկրանաց և պատճառ կենդանութեան սկզբուկ և ամուլ աշխարհիս, արևելից հիւսիսոյ ըստ Սահակայ և Իսրայէլի՝ աղատածին և պարգևական զաւակացն Սառայի և Ռեբեկայ. յորմէ օրհնեցան ոչ սակաւ ազգք և ազգինք, և զանմահականն առին զվիճակ, Գրիգորիոս՝ հիմն հաւատոյ, սիւն եկեղեցւոյ, յարդարիչ Աստուածատուր կրօնից, յարացոյց անարատ քաղաքավարութեան ըստ Քրիստոսի, Գրիգորիոս՝ հաստատութիւն երկրի, նաւաստի ծովու, բարձրութիւն երկնից, արեգակն 'ի մէջ աղօտ երևակ լուսաւորաց։ Գրիգորիոս՝ համանունդ հրեշտակաց, համապատիւ վեհիցն երջանկաց, անուանակիր պետութեանց, իշխանակից իշխանութեանց, զօրակից զօրութեանց։ Գրիգորիոս՝ դասակից Սերովբէից, հաղորդակից Քերովբէից, և հանդիստ և աթոռ սրբոյ Երրորդութեանն։ Զորոյ զգութն ողորմութեամբ և մխիթարութեամբ դարձուցես 'ի ժողովուրդս քո, և 'ի վիճակ ժառանգութեան քո, յաղագս Հայաստանեայց, որք անենգ և անխարդախ պահեն զառ 'ի քէն եղեալ հաւատս՝ չարչարանօք և ճգնութեամբ 'ի պարծանս քեզ յաւուրն Քրիստոսի։ Թէպէտ և 'ի բարեաց գործոց աղքատ գտանիմք՝ և յոյժ ամաչեցեալ, զոր քաւեցես մաքուր Քահանայապետդ մեր՝ և Աստուածային ծնողդ, և Հայցեսցես ընուլ զաւետեաց խոստումն, վերանալ և եկանել յառաջին փառսն և 'ի պայծառութիւն՝ թագաւորութեամբ՝ քահանայապետութեամբ և գործովք արդարութեան 'ի հաճոյսն Աստուծոյ։ Եւ զսակաւ ծաղիկս զայս՝ հաւաքեալ 'ի խօսուն մարգաց՝ ընկալ 'ի հիւսս պսակի ամենարժան Գլխոյդ, և տուր տեղի խորանի քո՝ աստիճանաժառանգ՝ որդւոյ քո՝ խնդրողի բանիս՝ ևս և յուսով աշխատողիս իմ։ որ ամենևին եմ անարժան որդիութեան քո և աշակերտութեան։ Բայց միայն 'ի ձեռն Քոյոյ մաղթանաց՝ սպասեմ ողորմութեան Աստուծոյ՝ հասանել խորհրդով տնօրէնութեանն Քրիստոսի՝ և 'ի հեղումն արեան Նորա. որ է օրհնեալ և գոհաբանեալ 'ի փառս Հօր, և 'ի պատիւ ամենասուրբ Հոգւոյն, և 'ի հրեղինաց և 'ի հողեղինաց, 'ի սուրբս իւր յամենայն արարածս, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶԱՔԱՐԻԱՅ ՊԱՏՄԱԳՐԻ

ՍԱՐԿԱՒԱԳԻ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՅ

Զաքարիա Սարկաւագ Յովհաննավանայ, որ էր 'ի սերնդոյ Ղազատացն Ղ բայ, որոյ և նախնիքը Վանաքեռ գիւղը կ'բնակէին, մեր Ազգի մէջ Դաւրիժեցի Առաքել պատմագրէն ետքը՝ եօթնեւտասներորդ դարու պատմագրաց մէկն է։

Սա իր պատմագրութիւնը երեք հատորի բաժանելով, առաջին և երկրորդ հատորոց պատմութիւնը Շահապազայ օրէն կ'սկսանի և կ'հասցնէ մինչև հայոց ԹՎՆԶ

(1687) թուականը. որ Եղիազար Կաթողիկոսի իշխանութեան ժամանակը կ'ինջանի, իւր կենաց հասակի վաթսուներորդ տարին, ինչպէս ինքը կ'գրէ, 'ի ժամանակի ծերութեան իւրոյ։

Իսկ իւր պատմագրութեան երրորդ հատորը Յովհաննավանից Կոնդակ ասացեալն է, որ կ'սկսի նոյն Վանքի պատմութիւնը 'ի Ս. Լուսաւորչէն, և կ'հասցնէ մինչև վերոյիշեալ թուականը. ուր վանքի շինութեան և յարատևութեան անցքերը կարգաւ կ'պատմագրէ, արձանագրութիւնները 'ի մի վայր կ'խմբագրէ, Առաջնորդաց շարքը հանդերձ թուականով նաև կալուածքները կ'նշանակէ, և իր ժամանակի քանի մի Առաջնորդաց պատմութիւնը կենսագրական տեղեկութեամբ կ'տայ, և իր նախնեաց ազգաբանութեամբ կը կնքէ զայն։

Ոճը անարուեստ է, թէև գրաբառ, բայց աշխարհաբառի խառնուրդով կը կազմէ։ Այս ևս գովելի է, որ բոլոր անցքերի հաւաստիքը վկայութեամբ և ականատեսութեամբ կ'գրէ. պատմութեանց երեք բաժինը գրեթէ' իր վաթսնամեայ հասակին մէջ լսած ու տեսած Հայաստանի կեդրոնամիջին պատահած դէպքերն են։—Ուրիշ անգամ առանձին տեղեկութիւն կ'ը տանք պատմագրութեան վրայ։

Այսքան համառօտաբար տեղեկութիւն տալով Օշաքարիայի պատմագրութեան վրայ, նորա կենսագրութիւնը անենք նորա պատմագրութեան երրորդ հատորէն։

Վերը յիշեցինք՝ որ Օշաքարիա Սարկաւագին սերունդը Վրաց ազատների ցեղից կ'իջնէին. որոց համար ինքը կ'պատմէ իրենց ազգաբանութեան մէջ, որ այն Ազատները տասներկու երիտասարդ տղայք էին ազատ տանէ. սուրբ Գէորգայ մասունքը վերադարձնելու պայմանաւ՝ այս տղայքը իւր նախարարներէն ժողվելով, Յովհաննավանքը պատանդ կ'ուղարկէ Վրաց Դաւիթ (Դաթօ) Թագաւորը. որոյ իշխանութեան տակն էր այն ժամանակ և Երբատեան աշխարհքը, որ է Յովհաննավանք։

Այլ երրոր Թագաւորը կ'դրժէ իր ուխտին, այս ազատ որդիքն էլ մէկ ժամանակ նեղութիւն քաշելով վանքին մէջ, կ'ցրուին այս տեղ այն տեղ Երբատեան գաւառին մէջ. յորոց Վասպ անուն մէկը կ'գայ Վանաքեռ գիւղը. սորա ցեղէն Մկրտիչ անուն, որ որդի 'ի Հօրէ առնլով՝ Վասպոյի եօթներորդն էր, կ'ծնանի զՕշաքարիա։

Ինքը կ'պատմէ՝ որ իր Մկրտիչ հայրը այս Վրաց Ազատորդւոց ցեղէն էր ըստ այսմ՝ ինչպէս ասացինք. "Եւ նա ունէր, կ'ասէ, որ 'ի վաղնջուց գրած էր ժողովածու, սորա մէջ գրած էր վասն որդւոցն Վրաց որդւոց յորդի մինչև ցհաւն իմ Խաչատուր. իսկ հայրն իմ, կ'ասէ, գրեալ էր 'ի հօրէ և յեղբարց իւրոց և վասն իւր. այն գիրքն կայր առ մեզ. և յորժամ եղև ահագին շարժն (յամին 1679), գիրքն այն անյայտ եղև"։

Օշաքարիա իրենց ազգաբանութենէն իմանալով, որ իրենք Յովհաննավանքին պատանդ են, իր տասը տարուան հասակին մէջ կերթայ, կը կրօնաւորի այն վանքի մէջ. մանաւանդ որ իր հօրեղբայրն էլ այս ցանկութեամբ անդ միաբանել, և անդ վախճանած էր։—Ինքը իւր այս կրօնաւորելուն թուականը չի ցոյց տար. բայց իր գրոց Գ. հատորի յառաջաբանին մէջ որ կ'նշա-

նակէ իր պատմագրութեան թիւը, և իր կենաց ամքը՝ վաթսուն, ոյն զրոց վերջին գլխի մէջն էլ կ'գրէ՝ թէ՝ յիսուն տարի է, որ կ'բնակի Յովհաննավանք. որով անսխալ կ'գտնենք սորա վանական լինելու թուականը, որ կ'ելանէ Հայոց ՌԺԲ թիւը (163) Փիլիպպոս Կաթուղիկոսի իշխանութեան հինգերորդ տարին, երբ որ նա գնացել էր Ասպահան սուրբ Լուսաւորչի Ջը բերելու։

Այս թուականիս Օձաբրիա Յովհաննավանք մնալով, աշակերտեցաւ իրեն անուանակից Օձաբրիայ Եպիսկոպոսին, որ այն տարի Յովհաննավանքին վանահայր կարգուած էր Փիլիպպոս Կաթուղիկոսէն։

Այս վանահայրը կ'բարեկարգէ մենաստանը, և ամեն կերպ զարդարելէն ետքը, կ'հաստատէ նաև դպրատուն վանքին մէջ, և ուսուցիչ կը կարգէ զ.Օձաբրիա։

Օձաբրիայ Եպիսկոպոսէն ետքը, Օձաբրիա կ'աշակերտի նորա յաջորդ Յովհաննէս վարդապետին. այս երկու վանահարց քառասուն և եօթը տարի ձեռնասուն աշակերտ կը լինի Օձաբրիա։ Կ'երևի թէ՝ այս միջոցիս Սարկաւագ եղած է, և այս աստիճանը իրրև 'ի վարձ իւր բազմամեա ծառայութեանը տրուած. վասն զի մարմնոյ պակասութիւն ունի եղել՝ կաղութիւն ոտից, ինչպէս յետագայք Կաղ Օձաբրիա կը կոչեն. միայն թէ ինքը որոշ չէ՝ գրեր թէ՝ յիշեալ վանահարց որէ՞ն առած է Սարկաւագութեան աստիճանը, այլ այսպէս կ'պատմէ, "Որ և ես վերջին 'ի ծնունդս Եկեղեցւոյ՝ քանքարաթագոյց ծառայ Քրիստոսի՝ Օձաբրիա գոլով 'ի փարթամ աւանէն Քանաքեռայ, որ եկեալ բնակեցայ յԱստուածաշունչ և 'ի հրաշափառ մենաստանս Յովհաննավանից առ գրուն մեծի Ամրոցոյն Յովհաննու Կարապետին, առ ոտս երիցս երանելի քաջ բարեբնապետին Օձաբրիայի և նորուն յաջորդի Յովհաննէս վարդապետի՝ ամ ԽԷ ընկալեալ աստիճան Երշեղիակոնութեան"։

Այս տեղից կ'երևի որ Օձաբրիա Սարկաւագը իւր պատմագրութեան Ա. և Բ. հատորոց վրայ չէ խօսիր. ուստի հաւատի է թէ յետոյ պիտի գրած լինի Ա. և Բ. հատորը. թէ որ յառաջ գրած լինէր, անշուշտ պիտի յիշէր, կամ Գ. հատորին յառաջաբանութիւն առանձին չէր գրել։

Մենք այս տեղ վերը գրածներս ստուգելու համար՝ դնենք Գ. հատորոյ յառաջաբանութիւնը, որ կ'սկսանի այսպէս։

ԿՈՆԴԱԿ ԾՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՑ.

"Յուցմունք ժամանակաց և պատմութիւնք նոցին գրեալ եղև յառաջնոց պատմագրաց. որք 'ի ժամանակս և 'ի դարս գրեցին որպէս դիտացին ըստ իւրեանց իմաստութեանն՝ զերից ժամանակաց, այսինքն՝ զանցեալն ընթեռնլով, զներկայն գրելով և զապագայիցն յուշ առնելով, յայտ արարին. ոմանք յաճախաբանութեամբ, ոմանք համառօտելով, ոմանք յառաջագիրք և ոմանք ժամանակագիրք, որպէս և պատմութիւնն իւրեանց ցուցանէ ըստ ոճին իւրեանց, ոմանք փիլիսոփայական ճարտասանութեամբ, և ոմանք Աստուածաշունչ գիտութեամբ, ոմանք լի իմաստութեամբ, և ոմանք աշխարհօրէն, և որով իւիք և է, մեզ ծանուցին զանցեալն. զի և մեք ներկայումս ուսանելով, ապագայիցդ ծանուցուք։

Որպէս և ես վերջինս 'ի ծնունդս Եկե-

ղեցւոյ քանքարաթաղոյց Ծառայ Քրիս-տոսի Զաքարիա գոլով 'ի վարթամ աւա-նէն Քանաքեռոյ, որ եկեալ բնակեցայ Ա-ստուածաբնակ և 'ի հրաշափառ սուրբ մե-նաստանս Յովհաննավանից առ դրան մե-ծի Ամրորդւոյն Յովհաննու Կարապետին՝ առ ոտս երիցս երանեալ քաջ բարուն-պետին Զաքարիայի և նորուն յաջորդի Յովհաննէս վարդապետի՝ ամս ԼԵ. ընկա-լեալ աստիճան Երշեղիակոնութեան, և յամենայնումբ դեղերէի թէ՝ ընդէ՞ր ոչ գոյ հաստատուն կոնդակ առ այն, այլ և խոր-հէի առնել, սակայն ոչ լինէի ձեռնհաս յաղագս երկուց. նախ՝ զի ընդ ձեռամբ տերանց էի. երկրորդ՝ 'ի մէջ մարմնաւոր զբաղմանց. բայց յետ վախճանի տերանց իմոց վերոգրելոց, հարկեցայ ն՝ այժմուս Առաջնորդէ 'ի Պարգիս վարդապետէ խոս-հեմոյ և բանասիրէ. արարի ինձ օժանդակ հոգին սուրբ և ամենամաքուր կոյսն Մա-րիամ, և միջնորդ ունելով՝ ողջախոհ և անմեղ աղաւնին զսուրբ Կարապետն, և սկսայ առնել 'ի ժամանակի ծերութեան Կ. ամի կենաց իմոց 'ի թուին ՌՃԼԶ. և թէ տա-ցէ կարողութիւն նոյն Հոգին սուրբ աղո-թիւք ձերովք՝ յայտ արարից որպէս և գի-տեմք՝ թէ 'ի պատմագրաց թէ յիշատա-կարանաց թէ յարձանաց և թէ 'ի լրոց իմաստուն արանց և 'ի գիտուն ծերոց, նշանակեցից զամենայն ստուգութեամբ, զի որք զկնի մեր գայցեն՝ ընթեռնլով 'ի միտ առնուն. որպէս և Մովսէս ասէ, հարցջի՛ր դու հարց քոց, և պատմեսցի քեզ 'ի ծե-րոց, և ուսցիս զամենայն որպէս և կամիս. վասնորոյ և դու ո՛վ մտերիմ հարազատ որ ընթեռնուս, մի՛ ապախտ համարեսցիս, զի կարողութիւն իմ այսքան է, ողջ լեր։

Զիշեալ Գ. հատորոյ վերջին գլուխը՝ որ Զաքարիա Պարկաւադի ազգաբանու-թիւնն է, նորա յաւարան այսպէս կ՚վեր-ջաբանէ։

"Զասնորոյ աղաչեմ առ լուսածնունդ զաւակդ սուրբ աւազանին՝ որդեգրեալք հօրն երկնաւորի, բազմաչարչար նահատա-կութեամբ սուրբ Լուսաւորչին, համա-կրօն և միաղաւան Աքանաղեան շառա-ւիղէ սերեալք, որք մակաղեալ կայք 'ի գոգ և 'ի ծոց սուրբ Կարապետիս, մի՛ վարկպարազի համարիք զաշխատանս ստո-բաստուղեալ և գետնամածեալ ծառայի ձերոյ. ընդ բազում երախտեաց ձերոց ընկալարուք և զսակաւս իմ, վասն զի են յա-գունք՝ որ յոգունց զյոգունս ձօնեն. և ես փոքրս 'ի փոքրունց՝ ընձեռեցի, որպէս 'ի նկարան զսեաւն շարայարեալ, ընդ մեծին՝ զմանունսն կարդեալ. վասնորոյ ընկալա-ցուք զսեցեղէնս 'ի պէտս արտաքոյ լաւա-ցքն. զի մի՛ 'ի ժամու պիտոյիցն՝ լաւն վատթարիցի. ողջ լերուք ամենայնիւ առ ամենայն իրս։

Ի թուիս ՆԵՆ. ՀՀ. ՆՆ. ԺԺ. ԵԵ. ԳԳ. այսինքն՝ ՌՃԼԶ. (1687) որ է Զաքա-րիայի վարթանամեայ հասակին թուականը. թուականին տակը անմիջապէս գրած է. "գծեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Ե-րևանցւոյ"։

Զաքարիա Պարկաւադի պատմագրու-թիւնը Ս. Աթոռոյս ապարանէն յետ ոչ բազում աւուրց 'ի լոյս կ՚ընծայուի. որով կ՚յուսանք թէ՝ մեր ժողովուրդը ծանօթա-նալով այնպիսի հռչակաւոր մենաստանի առաջին վայելչութեան և շքեղութեանը՝ և այժմեան աւերանաց և ամայութեանը, կը շարժին 'ի ջերմեռանդութիւն նորոգելու և

վերատին ուխտիւ և միաբանութեամբ պայծառացնելու զսուրբ Յովհաննու վանքն, և ազատելու զայն յաւերանաց և 'ի կոծանմանէն, յորում գտանի այժմ, ինչպէս տեսողք ևս կ' վկայեն. կ' յուսանք ևս որ փոքր միջոցում նորա տեղադրութիւնն էլ Աբրահամի միջոցաւ կ' հրատարակենք։

ԱՐԻՒ. ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՋՈՒՐ

Հայք՝ Քրիստոսի Տեառն մերոյ պաշտելի Հրամանն քաջ 'ի միտ առնլով, որ սուրբ Աւետարանի մէջ սրբազան Առաքելոց համար կ'աւանդէ ասելով, "Որ զձեզ ընդունի, զիս ընդունի"*), ամենայն ժամանակ աշխատեր են՝ որպէս Հրէական Ատուածպաշտութեան միջոցների սրբացեալ Նահապետաց և Մարգարէից յարգն ու պատիւն՝ յամենայն դէպս պահպանել՝ նոցա գրուածքներն սրբութեամբ ընդունելով և կատարելով. նոյնպէս և Քրիստոնէութեան դարերի մէջ գտնված սրբոց Առաքելոց, Հայրապետաց, Վարդապետաց, Նահատակաց և ամենայն սրբոց գրուածքներն ընդունելով՝ պինդ տպաւորել իւրեանց յիշողականութեան մէջ, և ամենայն յարգանօք մեծարել են նոցա սուրբ յիշատակներն և նուիրական տեղերն. և Քրիստոսի հրամանն կատարելով թէ՝ "Որ զձեզ ընդունի, զիս ընդունի" փառաւորել են նոցա նշխարքն. և յամենայն դէպս բարեխօս կացուցել Աստուծոյ առաջին՝ սուրբ Աւետարանից սովորած, որ երբ Հայոց սուրբ Երգար Թագաւորի ուղարկած 'ի Պաղեստին Երքունի գործով դեսպանքն՝ հանդիպելով Երուսաղէմ, ուր և լսելով Քրիստոսի Տեառն մերոյ հրաշագործութիւնքն՝ փութացան տեսանել Նորան, դիմեցին նախ՝ Փիլիպպոս Առաքելոյ մօտ, որն Անդրէաս Առաքելոյ հետ միասին յայտնելով Քրիստոսին՝ խնդրեցին հրաման զԵրգարու դեսպանքն ներկայացուցանելոյ համար, որպէս Թագաւորաց սովորութիւնն էր, և իւրեանց բարեխօսութեամբն թոյլտուութիւն ստանալով՝ ներկայացուցին Քրիստոսին. որոց և Տէրն Յիսուս յայտնեց իւր ուրախութիւնն. և երանի տուեց նոցանց, որ առանց տեսնելոյ կ'հաւատան իրեն և ամենայն պատուէրներն կ'կատարեն*)։

Այս Աւետարանական գրուածոց բացատրութիւնն ամենայն մարդ կարէ տեսնել Մովսէս Խորենացի մեծ Վարդապետի Ազգային պատմագրութեան մէջ**), և Քրիստոսի սուրբ Վաստառակի պատմութեան՝ և Երգար Թագաւորի կենսագրութեան մէջ, և զանազան Ազգային և օտարական գրուածոց մէջ, որպէս և Կիպրացի Եպիփան Եպիսկոպոսի Ճառախօսութեան մէջ տպագրուած Ս. Էջմիածնի Աշարաբ ամսագրի դեկտ. 1869 ամի թիւ Բ. երեսներումն 129 ց135։

Այսպէս Հայք քաջ տպաւորելով իւրեանց հոգւոց մէջ Տեառն Յիսուսի փրկարար պատուէրը, միշտ աշխատեր են յանուն Քրիստոնէութեան՝ սրբոց տօնելի

(*) Մատթ. Ա. Հատ. Գ.Ա. Ժ. համար 40։

(*) Յոհան. ԺԲ. 20. և Ի. 29։

(**) Խորեն.